

նաև «Երաժշտի Տեառն Պետրոսի» սկզբնաւորութեամբ ուղերձը (Յաւել. էջ 573), որու տողերուն սկզբնաւորութեան կը յօդեն՝ ԵՐԵՄԻԱՅԻ ԳԼՐԵԱՆՈՒՆ, ու վերջատառերը՝ Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ. նաև՝ «Նուրբ գրեալս յԷջմիածնում» վեցտողեան ոտանաւորը (անդ, էջ 574):

Երեմիա իր Էջմիածին երթուղարձին հանդիպած է Խրիմ և Պոնտոս: Խրիմի մէջ հրաւիրուած է Այա Դըրեատայի (Ս. Երրորդութեան) տօնին աւթիւ հոն տեղի ունեցած խրախճանութեան, որուն մէկ նկարագրական հատուածը (անաւարտ) հրատարակած ենք հատորիս Յաւելուածին մէջ (էջ 512-15): Իսկ Պոնտոսի մէջ գիրի առած է «Է՛ բանաւոր թաչուն» սկզբնաւորութեամբ իրարմէ անջատ երեք կարճ ոտանաւորներ (Յաւել. էջ 571-72), որոնց տողերուն սկզբնատառերը կը յօդեն ԷՐԵՄԻԱ և վերջատառերը՝ ՅՈՎՆԱԹԱՆ, Ի ՊՈՆՏՈՍ և ԻՄԱՆԻԷ՛ կրկնութեամբ:

Մինչ Երեմիա կ'երթար Էջմիածին ի տես իր Գրիգորիս վարդապետ որդւոյն՝ վերջինս ալ հօրը կարօտէն մղուած կը դառնար Կ. Պոլիս⁽¹⁾: Երեմիա հասնելով Էջմիածին՝ երբ կը լսէ Գրիգորիս վարդապետի ցամաքային ճամբով իր ծննդավայրը ուղևորիլը՝ 1685 տարուան «ի յեւս Յունվարի» նամակ մը կը գրէ Գաղատիոյ առաջնորդին՝ խնդրելով որ երբ վարդապետը հոն հանդիպի՝ իր բարի ակնարկը (նազարի շէրիֆ) պակաս չընէ անոր վրայէն (Յաւել. էջ 470-71)⁽²⁾:

Յիշենք՝ թէ Ամգեցի երբ 1690 Գեկտ. 15ին Եւգոկիայէն կու գայ Կ. Պոլիս, Երեմիա Սուլուամանաստըրի բոլոր քահանաներուն հետ զայն դիմաւորելու

(1) Ակինեան, Զէյլէպի, էջ 57:

(2) Նահապետ կաթողիկոս իր գահակալութեան առաջին տարին (1691) Կ. Պոլիս զրկած իր մէկ կոնդակին մէջ (մեր Զեռ. Թիւ 186, Թղ. 69ա-70ա) տեղ մը կը յիշէ Սեփանս վարդապետ Էնկիւրիոյ: Թերևս անոր գրած լինի Երեմիա իր նամակը: